

Հանրամատչելի գիտական զրադարան. Ա. ԳՈՒՄ-
ՊԼՈՎԻԶ. Հասարակական թէօրիաներ, թարգ. Խ.
Սամուէլեան. 1902 Թիլֆլիս

Ամեն մի ձեռնարկութիւն պէտք է մի որոշ ու պարզ նպատակ ունենայ, որպէս զի ձեռնարկողները աշխատեն իրենց որոշած նպատակին հասնել: Չգիտենք ձվքեր, (Աւամալի լամբ. ուղարկուած գրքուկի վրայ գրուած է «հրատարակչներին») բայց համոզուած ենք, որ բարի նպատակներով ձեռնարկել են հրատարակել շահաւոր և անհրաժեշտ գիտական գրքեր և «հրատարակչները» ընդհանուր վերնագրով հայերէն գրքուկներ և այդ հրատարակչի շարքին է «Հասարակական թէօրիաները»: Արդ, հրատարակողները համար պէտք է պարզ լինէ՞ր թէ հայ ընթերցողները որ դասակարգի համար են որոշուած այդ գրքուկները. «հասարակական թէօրիաներին» երևում է, որ ժողովրդական ընթերցանութեան համար չեն կարող լինել դրանք մնում է ուրեմն ընդունել, որ գոնէ միջնակարգ դպրոցների ուսման ընթացքն աւարտած պէտք է լինի մարդ, որ կարողանալ օգտուել ալսպիսի բովանդակութիւն ունեցող գրքուկներին: Մենք հակառակ չենք, որ այդ դասակարգի համար ևս պէտք է մտածել և հայերէն ընթերցանութեան գրքուկներ տպագրել նորանց համար. սակայն անհրաժեշտ ենք համարում, որ ալսպիսի ձեռնարկութիւն սկսողները ձեռնհաս և կարող անձինք լինին, հասկանան ալն, ինչ որ տալիս են ուրիշներին և որ գլխաւորն է հայերէն գիտեան:

Գիտական նիւթն առ հասարակ անհասկանալի կամ դժուար հասկանալի է լինում սչ մասնագէտի համար, թէ պարզ և կանոնաւոր լեզուով չէ արտաւարտուած: Այս տեսակէտից անս «Հասարակական թէօրիաներ» գործածքի հայերէն թարգմանութիւնը բոլորովին անպէտք է, որովհետև նրա ամեն մի էջը լիքն է լեզուի սխալներով: Թէ ինչպիսի հայերէնով է թարգմանուած այս 16 էջից բաղկացած գրքուկը՝ թող ընթերցողն ինքը տեսնէ հետևեալ օրինակներին:

«Սակայն մինչև այժմ բնական են համարուած միայն անօրգան (հայերէն ասում ենք անգործարանաւոր), կենդանաբանական ու հոգեկան երևութիւնները, որոնք բնական գի-

տու թեան առարկան են կազմում, գիտութիւնները, որոնց նպատակն է այդ երևութիւնների ծագման ու զարգացման, օրէնքները պարզելու (3 էջ) «...առաջինները ձգտել են ըմբռնել բնական երևութիւնները, որպէս զի ոչ միայն նրանց մէջ գտնուող երևութիւնները հասկանալու նրանց պատճառական կապը գտնելու, այլ և նրանց նոր ձևերը, նրանց ապագայ զարգացումը գուշակելու» (4 էջ) «Ամեն ինչ կատարում է անբնական կանոն»։ «այդ խառն աշփոթութիւնը աւելի ևս զգալու է իր մասին» «նա լուսահատուած է այդ ամենքին բացատրութիւն տալու» (5 էջ)։ «Մարդկային հոգու զարգացումը, քաղաքակրթութեան էւօլյուցիան չի կարելի ներկայացնել ֆիզիքական գործողութիւնների հետ ինքի ձևով» (7 էջ) «Ի հարկէ այդ տեսակ սխառմամբ տիրապետութիւնը խիստ է ֆիլոսոֆիան է» (9 էջ) «... Քէկուզ այդ տեսակ համեմատութիւնը հիմնած լինէր ամենաէական դժերի և ամենահոգեւոր լատիւթիւնների վրայ...» (11 էջ)։ «...Այդտեղի հարեցութիւններին ու անասուններին գրաւելու դիտաւորութիւններին» (13 էջ)։ «... որ անձնաւորութիւնն ամեն տեղ շրջապատուած է իր խմբի գաղափարներով ու մտքերով և մրցում է այլ խմբերի ձգտումներին դէմ» (15 էջ)։ «Կառական է մի թեթև հալեացք ձղել որևէ պարլամենտ... որպէս զի համոզուելու թէ...» (16 էջ)։ Գործ են ածուած մի շարք օտար բառեր, որոնց համար հայերէն լաւ բառեր ունենք «գէօլոգիա», «օրգանական», «թէօլոգիական» «նատուրալիստական», «կօնցէպցիա», «ֆունկցիոնալ», «ֆիզիոլոգիա», «սինգիլիարի» (?) և այլն։ Իսկ կոպիտ տառասխալով գրուած բառերն անթիւ են. «տրինակ», «լետանքներ», «արտալատում է» «լետակով», «իլլիսոֆալութիւն», «Մօնտեպէն», «իդեան», «դառձաւ», «դեկաւարում», «դասակարգներ», «տիրապետութիւն», «սեփականութիւն», «հայացք» և այլն և այլն։

Պարոններ, մի փոքր լարգանք ունեցէք դէպի ձեր մարնի լեզուն ու գրականութիւնը. որին ծառայել էք կամենում. միթէ հայերէնը չինարէն է ձեզ համար, որ այդքան դժուարանում էք սովորել։ Միթէ պատիւ է բերում ձեր ինքնասիրութեանը, որ ձեր սիրելի մայրենի լեզուով հրատարակուած ու միմիայն 16 երեսից բաղկացած գրկովը 50-ից աւելի լեզուի սխալներ պարունակէ...